ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2023թ. մարտի 17-ին N 49-Ա Ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՐԱԳԱԾՈՏՆ 1» ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի և համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման, փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի թիվ 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի թիվ 208-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշմամբ սահմանված կարգի 55-րդ կետի 1-ին ենթակետի պահանջով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի ավագանու որոշումը՝ (Ապարան քաղաք, Արագած, Արայի, Ափնագյուղ, Եղիպատրուշ, Երնջատափ, Թթուջուր, Լուսագյուղ, Ծաղկաշեն, Կայք, Հարթավան, Ձորագլուխ, Նիգավան, Շենավան, Շողակն, Չքնաղ, Ջրամբար, Սարալանջ, Վարդենիս, Վարդենուտ և Քուչակ) բնակավայրերի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 17.06.2022թ. թիվ 2-26 դրական եզրակացությունը և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 28.06.2022թ թիվ 01/11.2/6405-2022 գրությունը. ***որոշում եմ***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «ԱՐԱԳԱԾՈՏՆ 1» /Ապարան քաղաք, Արագած, Արայի, Ափնագյուղ, Եղիպատրուշ, Երնջատափ, Թթուջուր, Լուսագյուղ, Ծաղկաշեն, Կայք, Հարթավան, Ձորագլուխ, Նիգավան, Շենավան, Շողակն, Չքնաղ, Ջրամբար, Սարալանջ, Վարդենիս, Վարդենուտ և Քուչակ բնակավայրերի/ համակցված տարածական պլանավորման փաստաթղթերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Invalid signature

X

VERIFIED OCSP 3/7/2023 10:21:24 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ